«Ռեգիոն» հետազոտական կենտրոն

ՀՐԱՏԱՊ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հետազոտությունն անցկացվել է Միջազգային և անվտանգության հարցերի հայկական ինստիտուտի (ՄԱՀՀԻ) «Անվտանգության քաղաքականությունների քննարկումների բարելավումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում

Մենք ինտերնետում՝
www.regioncenter.info
www.publicdialogues.info
https://www.facebook.com/RegionCenter?fref=ts

ԱՐՏԱՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՒ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ԴԻՍԿՈՒՐՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԵԴԻԱՅՈՒՄ 2016-Ի ՆԱԽՕՐԵԻՆ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՐՎԱԳԻԾ

Լաուրա Բաղդասարյան
«Ռեգիոն» հետազոտական կենտրոնի տնօրեն

2016 թ հունվարի 29

«Մենք՝ բոլորս, մեդիաածխահոտի պատանդներ ենք, որն ստիպում է հավատալ պատերազմին…, պատերազմի սիմուլյակրը կանգնեցնում է մեր ընթացքը տնային կալանքի նման: Մենք՝ բոլորս, in situ (լատ՝տեղում) ռազմավարական պատանդներ ենք. մեր տեղը հեռուստացույցի էկրանն է, որտեղ ամեն օր ենթարկվում ենք վիրտուալ ռմբահարման»:

Հայտնի փիլիսոփա և մշակութաբան Ժան Բոդրիյարի՝ իրական պատերազմի և դրա մասին սփռվող պատկերների այս նկարագրությունն[1] ընդհուպ մինչև վերջերս կարելի էր համարել «ոչ այստեղի, բայց հիմայի» իրականության ընկալման դասական մի բանաձև: Մինչդեռ ներկայումս վերադարձել են թեժ ու իրական պատերազմների ժամանակները, որոնց ընթացքի և, առհասարակ, առկայության մասին տարբեր հասարակություններ տարբեր երկրներում իմանում են ոչ միայն տեսանյութերից, այլև, ասենք, սեփական բնակության վայրերում դրանց հետևանքների դրսևորումներից:

Օրինակ, մինչ այն պահը, երբ մերձավորարևելյան ու այլ տարածաշրջաններից փախստականների հուժկու հոսքը ստիպեց Եվրոպայի հնաբնակներին բախվելու այնտեղի ռազմական գործողությունների իրական հետևանքների հետ, Սիրիական պատերազմը եվրոպական հասարակությունների համար, ինչպես Բոդրիյարը կասեր, ընդամենը վիրտուալ պատկերների շարք էր, ինչպես դրանից առաջ խորհրդանիշներ էին Աֆղանստանը, Իրաքը, Լիբիան և այլ կիզակետեր:

[1] Жан Бодриайр, Войны в заливе не было, https://bookmate.com/books/U5Lkt96C

Նույնիսկ նախորդ տարեվերջին Փարիզում տեղի ունեցած ահաբեկչական գործողությունները, որոնք մոտիկից ցուցադրեցին համաշխարհային ահաբեկչական սարդոստայնը գործողության մեջ, հավանաբար «ոչ այստեղ, բայց հիմա» ընթացող պատերազմի սպառնալիքի իրական դեմքը տեսնելու առումով չունեցան այն ազդեցությունը, որքան տարբեր թեժ երկրներից դեպի իրենց ուղղվող բազմերանգ մարդկային զանգվածները: Չէ՞ որ ահաբեկչական հարձակումներն ունեն ինչ-որ սկիզբ և վերջ, դրանք կարելի է նույնիսկ կոնկրետ թվագրել: Բայց փախստականները երկարատև հանգամանք են, իրենց հետ բերում են ֆինանսական, միջէթնիկական, հոգեկերտվածքային (մենթալային), միջմշակութային, հազարումի այլ խորքային խնդիրներ, նրանք ունակ են խաթարել տասնամյակներով հղկված համակարգերը: Իսկ գլխավորը՝ նրանք տեղայնացնում են մինչ այդ «ոչ այստեղի, բայց հիմայի» իրականությունը:

Ներկայումս ծավալվող միջազգային գործընթացների հիմնական մասնակիցների անվտանգության և սպառնալիքների քարտեզներն անհամեմատ ավելի լայն ու բազմաչափ են, քան Հայաստանինը: Բայց դրանցից շատերը տարբեր մասշտաբներով արտահայտվում են Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի անվտանգության վրա:

Համաշխարհային այս խառնաշփոթ ու դինամիկ ժամանակահատվածում այս կամ այն սպառնալիքը վերաքննվում ու վերասահմանվում է՝ ուղեկցվելով երբեմն բևեռային հիմնավորումներով: Մանավանդ, որ ժամանակի առանձնահատկության և ինտերնետ հասանելիության շնորհիվ Հայաստանի աշխարհագրական դիրքի տեսանկյունից նույնիսկ աշխարհի ծայրում կատարվող իրադարձություններն են ընկալվում էմոցիոնալ ալիքի վրա՝ թողնելով «հիմա վտանգավոր է ամեն տեղ» չոր մնացորդը:

Հայաստանյան հանրային դիսկուրսի տարբեր ժամանակահատվածներում կատարած մեր նախկին (խորքային կամ մասնակի) դիտարկումների արդյունքներով՝ միջազգային ահաբեկչությունը, ռուս-արևմտյան, ռուս-ուկրաինական լարվածությունը, սիրիական պատերազմը, որպես անվտանգության սպառնալիքներ, միայն միջնամասշտաբ կամ փոքրամասշտաբ արտահայտություն էին գտնում հայաստանյան հանրային դիսկուրսում: Այսպես. անցած տարվա հունիսին հայաստանյան 15 տարբեր ԶԼՄ-ների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ միջազգային լրահոսի 21տարբեր թեմաների շարքում անվտանգության և սպառնալիքների թեման (տարբեր երկրներում ու տարածաշրջաններում տեղի ունեցած բախումների, Իսլամական պետություն

ահաբեկչական խմբակցության գործողությունների, դրանց հետ կապված այլ իրադարձությունների մասին նյութեր) ընդամենը չորրորդ հորիզոնականում էր: Ղարաբաղյան հակամարտության թեմային բաժին էր ընկել մեկ ամսվա ընթացքում արտադրվող հսկա լրահոսի 3%-ը: Մոտավորապես այնքան, որքան այլ երկրների ու կազմակերպությունների մասին նյութերում վեր հանված մշակույթի, հայկական սփյուռքի գործունեության, միջազգային կազմակերպություններում ընթացող ներկառուցվածքային խնդիրների թեմաներն են եղել:

Ամենից հաճախ լուսաբանված երկրների շարքում առաջին հորիզոնականները զբաղեցրել էին Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Ադրբեջանը, Թուրքիան: Դրանցից միայն Ռուսաստանն ու Ադրբեջանն են, որ մյուսներից ավելի շատ են դիտարկվել Հայաստանի հետ հարաբերությունների դիտանկյունից: Մնացած բոլոր արտասահմանյան երկրների ու միջազգային կազմակերպությունների դեպքում իրադարձություններն ու դրանց զարգացումները ներկայացվել են որպես Հայաստանի իրականությանը զուգահեռ ընթացող կամ ընդամենը ֆոնային երևույթներ:

Այլ խոսքով՝ այդ երկրներին սպառնացող վտանգները ներկայացվել են առանց հայաստանյան իրականությանը պրոյեկտելու: Նույնիսկ Թուրքիայում տարբեր պայթյուններն ու ահաբեկչական գործողությունները, որոնք տեղի ունեցան հունիսի խորհրդարանական ընտրությունների առաջին փուլի ընթացքում, ներկայացվեցին որպես ուրիշի խնդիրներ: Սիրիական պատերազմը, ուկրաինական ողջ թեմատիկան նույնպես լուսաբանվում էին այս տեսանկյունից ու հայկական իրականության հետ, հայերի շահերի հետ կապվում էին կամ միջնորդավորված՝ որպես այլ երկրների՝ այդտեղ ունեցած շահերի հետ համադրում, կամ էլ որպես մերձավորարևելյան ևս մեկ հնագույն հայկական սփյուռքի քայքայման, սիրիահայերի ֆիզիկական անվտանգության ու սպառնալիքի ներկայացում[2]:

Հիմա իրավիճակն այլ է: Պատերազմը, որպես աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական ու ներքաղաքական հարցեր լուծելու եղանակ, միջազգայնորեն ապաքրեականացվել է, և հայտնի չէ, թե երբ են հաստատվելու, այսպես կոչված, միջազգային նոր կարգերը:

Իսկ երկու զարգացումներն (հայ-ադրբեջանական հակամարտության գոտում, ըստ էության, 20-ամյա հրադադարի ռեժիմի տապալումը և ռուս-թուրքական քաղաքական հարաբերությունների սրացումը) արդեն էապես խտացրել են մինչ այդ կողքից դիտարկվող գործընթացները՝ հանրային դիսկուրսում մնացյալի համեմատ աննախադեպ ակտուալացնելով անվտանգության խնդիրները:

[2] Տես՝ Աշխարհի պատկերի ձևավորման հնարավորություններն ու պրակտիկան հայաստանյան մեդիայում, http://regioncenter.info/hy/Possibilities-and-Practices-of-Presenting-the-World-in-the-Armenian-Media-arm-Researches

ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԻՐԱԿԱՆ ԵՎ ՎԻՐՏՈՒԱԼ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Անցած մեկուկես տարվա ընթացքում հայ-ադրբեջանական սահմաններում բախումների բնույթն անընդհատ ու դինամիկ փոփոխվում էր՝ աստիճանաբար առաջացնելով զգացողություն, որ 2000-ականների ժամանակաշրջանի, այսպես կոչված, հարաբերական անդորրն[3] այլևս խաթարվել է իրական պատերազմի սկսման կամ մոտ լինելու համատարած զգացողությունից:

Չնայած պատերազմի վերսկսման մասին դատողությունները հայկական դիսկուրսում և միջազգային տարբեր շրջանակներում շրջանառվում էին պարբերաբար, հարաբերականորեն տևական ընդմիջումներով, սակայն հիմնական լեյտմոտիվը մնում էր «պատերազմի սպառնալիքը շրջանառվում է բացառապես ներադրբեջանական կամ միջազգային շրջանակների համար», «պատերազմի սպառնալիքն ունի բացառապես ներքաղաքական ուղղվածություն» և նման այլ պնդումների ծիրում:

Ըստ էության, հրադադարի ռեժիմը հիմնականում պահպանվում էր, իսկ շփման գծում տեղի ունեցող առանձին կրակոցներն ու տարեցտարի իրարից շատ չտարբերվող մարտական կորուստների ցուցանիշներն ընկալվում էին որպես առանձին վերցված, ընդհանուր պատկերից դուրս մնացող դրվագներ:

Պատերազմի հնարավոր վերսկսման մասին դատողությունները հիմնականում տեսական մակարդակի վրա էին մնում՝ լավ թե վատ, բայց որոշ պարբերականությամբ ընթացող քաղաքական բանակցությունների, ինչպես նաև հայ-ադրբեջանական տարբեր հասարակական կառույցների միջև գործող հաղորդակցական խողովակների առկայության շնորհիվ:

Այդ փուլում շնորհիվ հիմնականում ադրբեջանական քարոզչական «եթե ոչ, պատերազմելու ենք» մանտրայի ազդեցության՝ Ղարաբաղյան նոր պատերազմի մասին հայտարարությունները հայկական լայն շերտերում ընկալվում էին որպես քաղաքական վերին մթնոլորտների խոսքուզրույց:

Ամեն ինչ այլ դարձավ, երբ բանակցային գործընթացը տարիների ընթացքում նեղացվեց՝ հասնելով հրադադարի վերականգնման, ռազմական լարվածությունը

[3] 2000թ. առաջին կեսին տարբեր սոցհարցումների արդյունքներով հայաստանյան հասարակությունը Ղարաբաղյան հակամարտությունը որպես սպառնալիք մատնանշում էր ոչ առաջին և ոչ էլ երկրորդ տեղերում: Տես, օրինակ, «Հայաստանը և Ադրբեջանը «Ոչ խաղաղության, ոչ պատերազմի» ջրբաժանում», Երևան, 2005:

նվազեցնելու, հրադադարի խախտումները հետաքննելու խնդիրների: Միջհասարակական խողովակները խցանվեցին, և դրան զուգահեռ հայկական և ադրբեջանական զինված ուժերի միջև բախումներն առանձին կրակոցներից փոխակերպվեցին մի քանի օր տևող ռազմական ամբողջական գործողությունների:

Մեկուկես տարվա ընթացքում տեղի ունեցած այս փոխակերպման, ինչպես նաև ռազմաճակատում մարտական կորուստների՝ նախորդ ժամանակահատվածի համեմատ 1,5 անգամ[4] ավելացման արդյունքում 2015թ. վերջին մենք ունեցանք մի իրավիճակ, որը բնութագրվեց որպես «գագաթնակետին հասած լարվածություն» (ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյան, դեկտեմբերի 9), որպես «պատերազմ, հրադադար մենք, ըստ էության, այլևս չունենք» (ՀՀ ՊՆ մամուլի խոսնակ Ա. Հովհաննիսյան, դեկտեմբերի 22) և որպես «բավականին թեժ փուլում գտնվող հակամարտություն» (ՀԱՊԿ քարտուղար Ն. Բորդյուժա, դեկտեմբերի 28):

Գագաթնակետին հասած, բավականին թեժ և հրադադարի փաստացի տապալման պայմանների այդ լարվածությունը «կարմիր գծում» կանգնած մի իրավիճակ է, ինչպիսին երբեք չի եղել անցած երկու տասնամյակի ընթացքում: Ահա թե ինչու նաև ակտուալացավ մինչ այդ առիթից առիթ բարձրացվող արտաքին երաշխավորների ու երաշխիքների հարցը:

Թե ինչպես կվարվի ՀԱՊԿ-ը, որպես անվտանգության կազմակերպություն, ադրբեջանական կողմի այս կամ այն քայլերի, իրադարձությունների այս կամ այն ընթացքի դեպքում, այն հիմնական հարցադրումն է, որով սովորաբար դիմում էին ռուսաստանյան և ՀԱՊԿ-յան տարբեր ներկայացուցիչների: Հարցը կարծես փակվեց 2015թ. դեկտեմբերին, երբ, ըստ էության, ոչ թե տեստավորվեց, այլ բոլորին ի ցույց դրվեց ՀԱՊԿ-ի ներքին տրամադրվածությունը հայկական անվտանգության կարևորագույն խնդրի հանդեպ: Այն է՝ ղարաբաղյան կատակլիզմները Հայաստանի և Ռուսաստանի խնդիրն են, քանի որ Ադրբեջանի նախագահը «մեր ընկերն է»:

Դեկտեմբերի 8-ին հայ-ադրբեջանական հակամարտության գոտում հրադադարի հաստատումից հետո առաջին անգամ ադրբեջանական կողմը կիրառեց տանկ: Դրանից

---

[4] Չնայած, որ թե՛ հայաստանյան, թե՛ ադրբեջանական տարբեր աղբյուրներ ներկայացնում են տարբեր թվեր սեփական բանակներում մարտական զոհերի ու վիրավորների մասին, բայց, միևնույնն է, 2015թ. ընթացքում կողմերից յուրաքանչյուրի կորուստների թիվը 1,5 անգամ գերազանցել է 2014-ի համեմատ: 2015թ. հայկական կողմում եղել է 41, 2014-ին՝ 28 զոհ: Չնայած, որ ադրբեջանական աղբյուրները չեն ներկայացնում բախումների հետևանքով իրենց զոհերի իրական քանակը (ենթադրում եմ՝ նրանց մի մասի տվյալները հանրայնացվում են որպես ոչ մարտական կորուստներ), բայց դա էլ է խոսում նախորդ տարվա համեմատ 1,5 անգամ ավելացման մասին (2015 թ.՝ 37, 2014թ.՝ 24 զոհ): Հայկական կողմի կորուստների մասին բաց տվյալների խորապատկերին սեփական զոհերի իրական թիվը ցույց չտալը ծառայում էր ադրբեջանական բանակի «հաղթարշավի» պատկեր ձևավորելու նպատակին, սակայն տարվա վերջում ադրբեջանական մարտական կորուստների քանակը ներկայացվեց այն հարաբերակցությամբ, որքան հայկականն էր:

մեկ տարի առաջ՝ 2014թ. նոյեմբերին, հայկական բանակի զինավարժությունների ժամանակ ադրբեջանական զինուժի կողմից խոցված հայկական ռազմական ուղղաթիռն (դարձյալ հրադադարից հետո հակառակորդի ավիացիայի խոցման առաջին դեպքը) ավելի շատ տարբեր վերլուծական հաշվետվությունների, քան թե միջազգային, քաղաքական, հատկապես՝ ՀԱՊԿ-յան արձագանքների թեմա էր:

Դեկտեմբերի 9-ին ՀԱՊԿ-ի Ռազմական կոմիտեի նիստի ընթացքում ՀՀ ՊԲ Գլխավոր շտաբի պետ Յ. Խաչատուրովը, դատելով մամուլի համար հետագայում նրա մեկնաբանությունից, փորձել է քննարկման առարկա դարձնել ղարաբաղյան թեժացումը («Բոլոր մասնակիցները համաձայնեցին, որ պետք է առավելագույն ջանքեր գործադրել նման գործողությունների հետագա զարգացումը կասեցնելու համար»): Բայց հենց այդ մեկնաբանությունն իսկական սկանդալ առաջացրեց: Ադրբեջանական մամուլին տված բացատրություններում Բելառուսի, Ղազախստանի և Ղրղզստանի ՊՆ մամուլի ծառայությունները հայտարարեցին, թե ոչ ոք Հայաստանի ներկայացուցչին նման հայտարարությամբ հանդես գալու մանդատ չէր տվել:

Այսքանից հետո ՀՀ նախագահի հայտարարությունը ՀԱՊԿ գագաթաժողովի ընթացքում (դեկտեմբերի 21), թե ՀԱՊԿ-ը ՆԱՏՕ չէ, քանի որ այստեղ չի գործում «մեկը բոլորի համար, բոլորը՝ մեկի» սկզբունքը, և այն, որ ՀԱՊԿ-ը մի կազմակերպություն է, որտեղ սեփական շահերը հաճախ հակադրվում են ընդհանուր շահերին[5], հայաստանյան շրջանակներում ընդունվեց զուսպ գոհունակությամբ: Թեև այդ հայտարարությունը հայկական շահերի նկատմամբ անվտանգության հարցերով դաշնակիցների անտարբերության դեմ հրապարակային ու պաշտոնական բողոքի բացառիկ նմուշ էր:

---

[5] «Իհարկե, ցանկացած երկիր ունի իր շահերը, իր առաջնայնությունները, բայց դրանք չպետք է հակադրվեն մեր ընդհանուր շահերին և փոխադարձ պարտավորություններին: Ամեն անգամ, երբ Ադրբեջանի Զինված ուժերը Հայաստանի Հանրապետության դեմ կիրառում են ավտոմատներ, ականանետեր և հրետանային սարքավորումներ, նրանք կրակում են Աստանայի, Դուշամբեի և Բիշքեկի, Մոսկվայի և Մինսկի ուղղությամբ: Հիշեցնեմ, որ մենք Կանոնադրության մեջ ունենք համապատասխան հոդված: Եվ, եթե մենք ոչ միայն չենք կիրառում այդ հոդվածը, չենք քննարկում ստեղծված իրավիճակը, հարկ չենք համարում վերցնել լսափողը և հետաքրքրվել՝ ինչ է կատարվում դաշնակից Հայաստանում, և դրա հետ մեկտեղ նաև քվեարկում ենք միմյանց շահերի դեմ միջազգային կազմակերպություններում, երրորդ երկրների հետ ընդունում ենք երկկողմ հայտարարություններ, որոնց տեքստն ուղղված է ՀԱՊԿ դաշնակիցների դեմ, ապա մենք պարզապես այդ կրակոցների տակ ենք դնում մեր ամբողջ Կազմակերպությունը, նրա հեղինակությունը, նրա կարևորությունը»:
2015թ. դեկտեմբերին ՀԱՊԿ գագաթաժողովի ընթացքում Ս. Սարգսյանի ելույթից, www.lragir.am/index/arm/0/country/view/125378#sthash.zOg5ik2M.dpuf

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՈՏԻՎՆԵՐԸ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Դրանք հատկապես սկսեցին ակտիվ շրջանառվել Թուրքիայի կողմից ռուսական «СУ-24»-ի խոցումից (նոյեմբերի 24) հետո՝ առաջին շոկային փուլում: Շոկ, որը ռուսաստանյան ԶԼՄ-ներում դրսևորվում էր հայ-թուրքական գրեթե բոլոր հակասությունների ու ցավոտ լարերի վրայով եռանդուն դեսուդեն անելու տեսքով:

Կարծես թե ռուս-թուրքական նախորդ տարիների բավականին ինտենսիվ մերձեցումն իրականանում էր ոչ թե բացառապես ռուսաստանյան, այլ բացառապես հայկական շահերի հրամայականով, և իբրև թե հայաստանյան կողմում այդ մերձեցումն ընդունվելու էր ողջույնի տեղեկատվական հրավառություններով:

Ռուսաստանը կարող է Թուրքիային զրկել իր տարածքի 30%-ից[6], Թուրքիան բացում է Ղարաբաղյան ռազմաճակատը[7], Թուրքիան տանկեր է մոտեցնում Հայաստանի սահմանին[8], Ռուսաստանյան հազարավոր զինվորականներ տեղակայվում են հայ-թուրքական սահմանին[9] և այս կարգի այլ հրապարակումներ անարգել հայաստանյան ինֆոաղբյուրներ էին տեղափոխվում արտասահմանյան տարբեր, այդ թվում նաև՝ կասկածելի ծագման հարթակներից: Եղան նաև բացառիկ մոլորյալ մեկնաբանություններ, որոնք ընդգծում էին ռուս-թուրքական սրացման ռազմավարական դրական նշանակությունը հայկական շահերի համար[10]:
Հայաստանյան տեղեկատվական ռեսուրսներում այս կարգի տատանումները շատ արագ հավասարակշռվեցին զուսպ գնահատականներով, ինչը, թերևս, կարող էր և զարմանալի թվալ, բայց լավագույնս բացատրվում է հետևյալ ձևակերպման մեջ. «Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը մնում է անկանխատեսելի: Չեմ զարմանա, եթե որոշ ժամանակ անց մենք տեսնենք նույնքան անսպասելիորեն բռնկված ռուս-թուրքական բարեկամությունը «և սերը մինչև մահվան մահիճ»: Հարցն այն է, թե

---

[6] Պուտինը կարող է զրկել Թուրքիային իր տարածքի 30 տոկոսից (քարտեզ), www.168.am/2015/11/28/568023,

[7] Турция открывает Карабахский фронт, http://news.rambler.ru/head/32062901/?utm_source=facebook&utm_medium=sharing

[8] Թուրքիան տանկեր է մոտեցնում Հայաստանի սահմանին, http://videochart.net/video/06804.03184e407e24fb493ade15fec875

[9] Тысячи российских военных развёртываются на армяно-турецкой границе, http://warfiles.ru/show-101439-smi-tysyachi-rossiyskih-voennyh-razvertyvayutsya-na-armyano-tureckoy-granice.html

[10] Ուրախությունից չգոռալ. Ռուսաստանը պատրաստվում է խզել Կարսի ու Մոսկվայի պայմանագրերը, http://hartak.am/arm/n-51103#sthash.BPwX2abj.ho5ooFNC.dpuf

ում մահվան մահիճն է դա լինելու: Մեր խնդիրն է, որ այն հայերինը չլինի»: [11] Ռուս-թուրքական սրացումը նաև այլ կողմից բացեց ղարաբաղյան լայնամասշտաբ պատերազմի վերսկսման թեման: Այս առիթով արտահայտվող կարծիքները նույնպես իրարամերժ են, ինչպես հակասական են մնում պնդումները՝ արդյո՞ք Ադրբեջանի ներքին լարվածության այս փուլում իր իշխանության շուրջ հասարակությանը համախմբելու համար Ալիևը կդիմի հայերի դեմ լայնամասշտաբ պատերազմելու միջոցին:[12] Կան պնդումներ, որ իր սեփական, առավել կարևոր խնդիրներով ներկայումս մտահոգ Անկարայի համար բացարձակ տեղին չէ Ռուսաստանի դեմ ղարաբաղյան պատերազմով հանդես գալու տարբերակը:

«Սա ամենևին չի նշանակում, որ Անկարան այլևս շահագրգռված չէ սատարելու Բաքվին ընդդեմ Երևանի ու Ստեփանակերտի, պարզապես ռուս-թուրքական հարաբերություններում առաջացած սուր և խորացող ճգնաժամը միանգամայն նոր հեռանկարներ է բացում Էրդողանի վարչակազմի առջև, որոնց համատեքստում հաջողության հասնելու համար թուրքական կողմը պարտավորված է քայլերի շատ որոշակի հաջորդականություն սահմանել, իսկ այս պահին Արցախում պատերազմական գործողությունների վերսկսումն այդ հաջորդականությունը կարող է անդառնալիորեն խախտել ու տապալել ամբողջ գործը»[13]:

Ըստ էության, Ռուսաստանի՝ հայկական և ադրբեջանական կողմերին սպառազինելը հայաստանյան դիսկուրսում միակ հարցն էր, որը կոնսենսուս է առաջացրել բոլոր շրջանակներում:

Խոսվում էր ոչ միայն այն մասին, թե ինչու է Մինսկի խմբի համանախագահ, Հայաստանի համար ռազմական անվտանգության երաշխավոր կանգնած Ռուսաստանն առհասարակ սպառազինում թշնամական Ադրբեջանին, այլ այն, որ Հայաստանին և Ադրբեջանին մատակարարվող սպառազինությունները տարբեր են իրենց հնարավորություններով:

[11] Справиться с угрозами и вызовами в условиях цен на нефть ниже $30 Армении и Арцаху будет не менее сложно, чем при $100, http://arminfo.am/index.cfm?objectid=F5A36310-BF51-11E5-86C10EB7C0D21663

[12] Օրինակ, նախքան Ադրբեջանում ներքաղաքական սրացումները, որոնք հատկապես դրսևորվեցին 2016թ. առաջին իսկ օրերից երկրի տարբեր շրջաններում բռնկված բողոքի ակցիաներով, հայաստանյան փորձագիտական շրջանակներում կային պնդումներ, թե Ի. Ալիևը կարող է գնալ Ղարաբաղյան ռազմաճակատի ողջ երկայնքով պատերազմելու քայլին, քանի որ այդպես կարող է վերահաստատել իր դիրքերը պրոտեստային ուժերի նկատմամբ: Սակայն զուգահեռ ի հայտ եկան հակառակ կարծիքներ, որ այս պայմաններում պատերազմին գնալը Ալիևի համար նշանակում է սեփական ձեռքերով մոտեցնել քաղաքական սեփական վախճանը:

[13] Ալիևի իշխանությունն արդեն շատ մոտ է տապալմանը. Ադրբեջանը վերաֆորմատավորման է ենթարկվելու, http://www.1in.am/1818416.html

Ռուս-թուրքական առայժմ միակ ռազմական բախումից հետո հայաստանյան տարբեր, այդ թվում նաև՝ պաշտոնական շրջանակներում փորձ է արվում Ռուսաստանի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ, ի վերջո, իրադարձությունների էլ ավելի սաստկացման պարագայում Ադրբեջանին մատակարարված ռուսական զենքը կարող է ուղղվել ոչ միայն հայերի, այլև ռուս զինվորականների դեմ[14]:

Այս համատեքստում ՀԱՊԿ-ից ավելի բարվոք ընկալում է ստացել ՆԱՏՕ-ն, մասնավորապես՝ ԱՄՆ-ը: Քանի որ, ըստ էության, հենց նրանք կարող են ռուս-թուրքական սրացման աղմուկի տակ Թուրքիային հետ պահել Հայաստանի դեմ ոտնձգություններից:

Կա կարծիք, որ ՆԱՏՕ-ն հանդես է գալիս որպես Թուրքիային զսպող ուժ: Նույն դիրքերից է հանդես գալիս նաև ԱՄՆ-ը, քանի որ հենց նրա հետ են ի վերջո քննարկվում Թուրքիայի համար բոլոր ցավոտ խնդիրները: Ադրբեջանի և Թուրքիայի միջև ռազմական փոխօգնության ալյանսը համարվում է մի հարց, որը ՆԱՏՕ-ն և ԱՄՆ-ն առայժմ գերադասում են չդիտարկել ակտիվորեն[15]:

Ռուս-թուրքական սրացման այս պայմաններում ռուսական երկու ռազմակայանները մատակարարվող կենդանի ուժով ու ժամանակակից սպառազինություններով ամրացնելը իր հերթին դիտվում է ոչ թե որպես Հայաստանի անվտանգության ամրապնդում, այլ հակառակը՝ մի կողմից որպես Հայաստանի ինքնիշխանության թուլացում ևս մեկ նահանջ քայլով, մյուս կողմից՝ առիթ՝ դե յուրե ռուսաստանյան ուժերի, դե ֆակտո՝ Հայաստանի դեմ այժմ էլ արդեն թուրքական ուղղակի ռազմական գործողությունների համար:

Ի վերջո, իրադարձությունների կտրուկ սուր սցենարով զարգացման դեպքում թուրքական ուժերը կարող են նաև հարվածել հայկական տարածքում գտնվող ռուսաստանյան ուժերին, իսկ հետո արդեն կարևոր չի լինի, թե հարվածի տակ հայտնված օբյեկտներն իրապես ռուսական ռազմուժե՞րն են եղել, թե՞ տեղի է ունեցել ցավալի սխալմունք, և տուժել են Հայաստանի խաղաղ բնակավայրերը: Բացի այդ հայ-ռուսաստանյան համատեղ հակաօդային համակարգի վերազինումը և հզորացումը մի շարք վերլուծաբանների մոտ առաջացնում է կոնկրետ հարց՝ իսկ ո՞վ է որոշելու՝ կրակե՞լ, թե՞ ոչ և ո՞ւմ վրա կրակելը:

---

[14] Ռուս-թուրքական հարաբերությունների սրումը «բացասաբար է անդրադառնում» Հայաստանի վրա, http://www.azatutyun.am/content/article/27470534.html, Իշխանությունը զգա՞ց ռուսական ռազմական լծակի վտանգը, http://www.aravot.am/2016/01/16/647860/

[15] Понятие «гарантии безопасности», http://www.lragir.am/index/rus/0/comments/view/46089

Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի համար կարևորագույն երկու՝ հայ-ադրբեջանական և հայ-թուրքական հարաբերություններում, որոնք այլևս պետք է դիտարկել հայկական և ադրբեջանական անվտանգության երաշխավորների հետ տեղի ունեցող զարգացումների ընդհանուր տիրույթում, ընթանում են լրջագույն փոփոխություններ:

Դրանք Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի համար անվտանգության ինքնազգացողության շեմի անկման առաջին նախանշաններն են՝ չնայած, որ այդ շեմն իջել է գրեթե բոլորի համար: Վերջին ժամանակներս տեղի ունեցած միջազգային մի շարք շղթայական գործընթացների ակնհայտ չոր մնացորդը «հիմա վտանգավոր է ամենուրեք» համոզմունքն է, որն իրենց հետ աշխարհի տարբեր ծայրեր հասցրեցին հին ու նոր պատերազմներից տուժածները՝հարավից դեպի հյուսիս ու արևելքից դեպի արևմուտք ուղղվող փախստականները:

Այդ միջազգային գործընթացների ընդհանուր հայտարարը պատերազմի՝ իր նախկին վիրտուալ տիրույթներից ավելի շատ դեպի իրական տարածաշրջաններ տեղափոխումն է, պատերազմելու միջոցով աշխարհաքաղաքական ու ներքաղաքական հարցեր լուծելու միջազգայնորեն ապաքրեականացումը:

Այս խորապատկերին 2015թ. հատկապես երկրորդ կեսին հայ-ադրբեջանական սահմաններում տեղի ունեցող բախումները, որոնք արդեն ոչ թե առանձին փոխհրաձգություններ, այլ պատերազմական ամբողջական գործողություններ էին հիշեցնում, հայկական հանրային դիսկուրսում մարգինալացրեցին Ադրբեջանի հետ խաղաղ կարգավորման անհրաժեշտության մինչ այդ տարածված թեզը: Իսկ հրադադարի ռեժիմի մեծ հաշվով հաջող պահպանման պայմաններում քաղաքական բանակցություններից ունեցած սպասելիքները դարձան քաղաքական ռոմանտիզմի դրսևորում: Եվ սա, հավանաբար, ադրբեջանական կողմի քարոզչական, բայց ոչ ռազմավարական և իրական քաղաքական ձեռքբերումը կարելի է համարել:

Ադրբեջանի կողմից պատերազմի վերսկսման մասին սպառնալիքները, որ հնչեցվում էին հրադադարի ողջ ընթացքում, բայց ընկալվում էին հայկական հանրության կողմից որպես քաղաքական վերին մթնոլորտների խոսքուզրույց, մի տեսակ վիրտուալ ընկալման էր արժանանում հայկական ոչ ռազմական շրջանակներում: Սա է պատճառը, որ պատերազմելու ցանկության մասին բոլոր նման հնչեցումներին հայկական վերլուծական միտքը հակադրում էր հիմնականում երկու՝ արտաքին-քաղաքական բացատրություն. առաջինը՝ պատերազմել Ադրբեջանին ոչ ոք թույլ չի տա, քանի որ դա չի բխում արտաքին խոշոր խաղացողների ֆինանսատնտեսական ու աշխարհաքաղաքական շահերից, և երկրորդ՝ անկախ հայերի ու ադրբեջանցիների համար այդ պատերազմի արդյունքներից՝ արտաքին երաշխավորներն ունենալու են նոր գլխացավանք՝ կապված հիմա էլ միմյանց դեմ դուրս գալու անխուսափելիության հետ:

Բայց, ինչպես ասում են, շաբաթն ուրբաթից շուտ եկավ, և անցած տարեվերջին մենք ունեցանք այս բոլոր հանգամանքների՝ միանգամից ասպարեզում հայտնվելու փաստը:

Հայ-ադրբեջանական սահմանային իրավիճակն ընդհուպ մոտեցավ լայնամասշտաբ պատերազմի «կարմիր գծին», և նույնիսկ Ադրբեջանի համար ծայրահեղ ծանր ներքաղաքական ու ֆինանսատնտեսական պայմաններում այդ գիծը նա դեռ կարող է հատել: Ի՞նչ տարբերություն, թե իրական պատերազմական գործողությունները հայկական և ադրբեջանական զինուժերի միջև ընթանում են առա՞նց պատերազմի պաշտոնական հայտարարման, ինչպես վերջին մեկուկես տարվա ընթացքում է եղել, թե՞ հանդիսավոր հայտարարությունից հետո:

2015թ. նոյեմբերին ռուս-թուրքական սրացումը գրեթե նույնքան լարվածությամբ ընդունվեց հայկական կողմում, որքան մտահոգիչ է եղել մինչ այդ՝ տարիների ընթացքում արագ տեմպերով արձանագրվող ռուս-թուրքական մերձեցումը: Եվ, եթե այդ մերձեցումը (այն իր գագաթնակետին հասավ 2014թ. դեկտեմբերին, Ռուսաստանի դեմ արևմտյան պատժամիջոցների սկսման խորապատկերին կնքված մի շարք երկկողմանի համաձայնագրերով) հայկական կողմին անհանգստացնում էր ռուս-ադրբեջանա-թուրքական քաղաքական հնարավոր դավադրության առումով, ապա ներկայիս սրացումները կարող են Հայաստանը պարզապես վերածել ռուս-թուրքական ռազմական գործողությունների թատերաբեմի: Այս պարագայում բացարձակ անհնարին է դառնալու «ուրիշների պատերազմից ու բախումներից» հեռու մնալը, ինչը Հայաստանին հաջողվում էր նախորդ տարիներին (08.08.08թ. ռուս-վրացական, 2014թ. ռուս-ուկրաինական պատերազմները):

Ընդ որում, եթե մինչև 2015թ. նոյեմբերը Հայաստանի նկատմամբ ռազմական գործողություններին Թուրքիայի մասնակցությունը հնարավոր էր, այսպես կոչված, երկրորդական դիրքերից (Թուրքիան հանդես էր գալու որպես Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի դեմ պատերազմի դուրս եկած Ադրբեջանի ռազմավարական ու եղբայրական պետություն), ապա ռուս-թուրքական սրացման և առավել ահագնացման պարագայում Թուրքիան կարող է վերածվել Հայաստանի նկատմամբ ռազմական գործողություններ իրականացնող առաջին դերակատարի:

Հայ-ռուսական համատեղ օդային պաշտպանության նոր փաստաթղթերը, որոնք անցած տարվա դեկտեմբերին կնքվեցին Հայաստանի ու Ռուսաստանի պաշտպանության նախարարների կողմից, առայժմ ոչ թե փարատում, այլ ավելի են ամրացնում սեփական (Ղարաբաղյան) պատերազմին ուրիշի (ռուս-թուրքական) խժդժությունները գումարելու մտավախությունը:

Կա ևս մեկ հետաքրքիր մետամորֆոզ. այն կապված է կոլեկտիվ անվտանգության համակարգերի հետ: Նույն տարվա դեկտեմբերին հայկական հանրության աչքերում ՀԱՊԿ-ի խայտառակ ու երևի թե վերջնական անկման խորապատկերին ՆԱՏՕ-ն առայժմ պահպանում է Թուրքիային զսպող ուժի իր նախկին համբավը:

Ի վերջո, ռուս-թուրքական հարաբերությունների առավել սրացման դեպքում հենց ՆԱՏՕ-ն է պարտավոր լինելու հանդես գալ ռուսական բանակի դեմ: Մերձավորարևելյան վերջին զարգացումները, առաջին հերթին՝ Իրանի միջազգային ազատականացումը, ցույց են տալիս, որ նման անհրաժեշտությունը ՆԱՏՕ-ի համար վերջին տարբերակ է համարվել: